

ՀԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԶՆԴԵԿՐՈՊԱԿԱՆ ԶԱՅՆԴԱՐԶԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ս. Ռ. ԱՎԵՏՅԱՆ

Հնդեվրոպական լեզուներում ձայնավորների հերթագայությունների ծագումնաբանական քննության արդյունքում ձայնդարձի հիմն և նոր շերտերից բացի՝ միաժամանակ ի հայտ են գալիս այնպիսի դեպքեր, երբ հ.-ե. ձայնդարձի տարբեր շարքերը հերթագայվում են միմյանց հետ: Ընդ որում, ինչպես ստորև կտեսնենք, այդ կարգի հերթագայությունները ծագումնաբանորեն հ.-ե. ձայնդարձի տարբեր շարքերի անկանոն խառնուրդ չեն ներկայացնում, այլ հ.-ե. ձայնդարձի սկզբնական այս կամ այն շարքի հիման վրա մի նոր շարքի առաջացումը տեղի է ունեցել հ.-ե. հերթագայությունների օրինաչափությունների համաձայն: Այսպես, Կ. Բրուգմանը սանսկրիտում հ.-ե. *ə-ի դրսևորման (հ.-ե. *ə > սանսկ. i) համապատասխան օրինակներ թվարկելիս նշում է նաև սանսկ. sidhyati-ն՝ լիաձայն աստիճանի sādhati «հասնում է նպատակին, կարգի է բերում» ձևի դիմաց¹:

Թու. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանական բառարան»-ում սանսկ. վերոհիշյալ բառերի և ցեղակից մյուս ձևերի համար վերականգնվում են միմյանց հետ հերթագայվող հ.-ե. *sē(i)dh, *sīdh և *sədh տարբերակներ², որոնցից առաջինը ակնհայտորեն ներկայացնում է հ.-ե. ē/ə հերթագայության լիաձայն աստիճանը, իսկ վերջին երկուսը՝ նույն հերթագայության զրո աստիճանը: Ինչպես հայտնի է, հ.-ե. ձայնդարձի օրենքների համաձայն՝ հ.-ե. *ēի երկբարբառի հերթագայության զրո աստիճանը, որտեղ ē-ն լիաձայն աստիճանի ձայնավոր է և ոչ թե ē-ի երկար աստիճան, սովորաբար լինում է əի կամ i: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս հ.-ե. *sēidh-ի հերթագայության զրո աստիճանի *sīdhus-ից ծագող հուն. ἴθυσ³-ը, տվյալ դեպքում հ. ե. *ē-ն հ.-ե. *ə-ի հետ հերթագայվող լիաձայն աստիճանի ձայնավոր է: Ըստ այդմ, պետք է ենթադրել, որ *sīdh-ի համապատասխան լիաձայն աստիճանը եղել է *sēidh, իսկ *sədh-ի համապատասխան լիաձայն աստիճանը եղել է *sēdh: Միևնույն ժամանակ նույն հուն. ἴθυσ-ի շնորհիվ պարզվում է, որ հուն. εἶθαρ, εἶθυσ (< εἶθυσ) ձևերը՝ ծագում են հ.-ե. *sēidh-ը, *sēidh-us նախաձևերից՝ հունարենում հաջորդող բաղաձայնից առաջ հ.-ե. երկար երկբարբառների կարճացման հնչյունական օրենքի համաձայն⁴: Մյուս կողմից՝ հ.-ե. *ēի-ի հերթագայության զրո աստիճանը սանսկրիտում սովորաբար լինում է i կամ ē (<* հ.ե. əi-ից) նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ արմատի հերթագայության

¹ Տե՛ս Ս. Ավետյան, Հնդեվրոպական լեզուներում ձայնավորների հերթագայությունների հիմն և նոր շերտերի քննության փորձ, ԲԵՀ, 2003, № 1, էջ 113-122:

² Տե՛ս K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Bd. 1, Strassburg, 1897, S. 172.

³ Տե՛ս Ju. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, Bd.1, Bern, 1959, S.892.

⁴ Տե՛ս K. Brugmann, նշվ. աշխ., էջ 892:

⁵ Տե՛ս Ju. Pokorny, նշվ. աշխ., էջ 892:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս П. Шантрен, Историческая морфология греческого языка, М., 1953, էջ 281:

լիաձայն աստիճանում երկբարբառի երկրորդ բաղադրիչը ընկել է հաջորդող բաղաձայնից առաջ. հմմտ. հ.-ե. *gē(i), *gō(i), *gʷ «երգել» նախաձևային տարբերակների լիաձայն աստիճանից ծագող սանսկ. gāti «երգում է», բայց նույնի հերթագայության գրո աստիճանը՝ սանսկ. ցիձ «երգված»⁹: Այդպես էլ հ.-ե. * dhē(i) «ծծել, կրծքով կերակրել» արմատի լիաձայն աստիճանից է ծագում սանսկ. աորիստ եզ. III դ. ādhāt, ապառնի dhāsyati, բայց հերթագայության գրո աստիճանը սանսկ. dhīta «ծծված» և dhēnu «կթվող, կթի» <*dhəi-nu⁹ և այլն: Ուստի, այն հանգամանքը, որ հ.-ե. *sē(i)dh- ի հերթագայության գրո աստիճանը սանսկրիտում ներկայացված է կարճ *i* ձայնավորով. հմմտ. սանսկ. siddha, sidhra¹⁰ և այլն, կարծում ենք, վկայում է այն մասին, որ սանսկ. sādhi -ը ծագում է հ.-ե. *sēdh միաբարբառային նախաձևից, իսկ սանսկ. գրո աստիճանը ներկայացնող sidhi -ը՝ հ.-ե. համապատասխան *sēdh նախաձևից: (Այլապես, եթե սանսկ. sādhi-ը ծագած լիներ հ.ե. *sēdh-ից, հերթագայության գրո աստիճանի սանսկ. ձևը պետք է լիներ sidhi:) Բայց սանսկրիտում միաժամանակ վկայված են նաև sēdh և sādhi արմատական տարբերակներ. հմմտ. պերժ. sišēdha «հասել է նպատակին» մի կողմից և ներկա, եզ., 3. դ. sādhdōci և sādhis «նպատակ»-ը մյուս կողմից: Այնհայտ է, որ վերջիններս ո՛չ հ.-ե. *ēi/əi/ i և ո՛չ էլ ē/ə շարքի ներկայացուցիչներ լինել չեն կարող: Ընդհանրապես, սանսկ. sēdh -ը ենթադրում է սանսկ. ēi/< հ.-ե. *ei/oi/i, իսկ sādhi-ը՝ կարող է օ/ə/qrո < հ.-ե. ē/ē/ō/ō/ գրո ձայնդարձի շարք: Բայց քանի որ հ.-ե. ձայնդարձի տեսանկյունից սանսկ. sēdh և sādhi տարբերակներից համաժամանակ ձևեր այդ լեզվից դուրս ուրիշ ոչ մի տեղ չեն հանդիպում և մյուս կողմից, հ.-ե. *sē(i)dh արմատի դեպքում սանսկ. sēdh -ը և sādhi-ը հակասում են հ.-ե. ձայնդարձի օրենքներին, մնում է ենթադրել, որ sēdh -ը և sādhi-ը սանսկրիտական նորակազմություններ են:

Մեր կարծիքով, սանսկ. sēdh տարբերակի առաջացմանը նպաստել է այն հանգամանքը, որ սանսկրիտում հ.-ե. *ə -ն և հ.-ե. i -ն ձևով համընկել են: Ըստ այդմ, հ.-ե. *sēdh > սանսկ sidhi տարբերակից, որն ըմբռնվել է որպես հ.-ե. *lik > սանսկ. ric «լքել, թողնել» տիպին պատկանող արմատ, rīcēca պերժ. օրինաչափ ձևի համաբանությամբ կազմվել է սանսկ. sišēdha պերժ. ձև: Այդ նույն ձևով էլ սանսկ. sādhi լիաձայն աստիճանը ըմբռնվել է որպես սանսկ. օ/ə/qrո շարքի երկար աստիճանը ներկայացնող ձև, որից էլ համաբանությամբ կազմվել է sādhi լիաձայն աստիճան: Քննությունը ցույց է տալիս, որ այդպիսի համաբանական նորակազմություններ են ներկայացնում նաև հուն. δακνω «կծում են» բայի ապառնի ծղօժում, պերժ. δεδηγμαι, δεδηχως, ինչպես նաև հուն. λαγχανωս բայի ε'իղχα պերժ. ձևը: Հ.-ե. *denk՝ արմատի հերթագայության գրո աստիճանից են ծագում հուն. δακνω < հ.-ե. dōk'-ոծ, աորիստ եզ. III դ. ε-δακον (= սանսկ. իմպերֆ. adasam)¹¹ (հմմտ. սանսկ. պերժ. dadamsa «կծել է», սանսկ. damśanam «կծելը», հ. p. q. zangar «կծող, սուր» և այլն): Ըստ այդմ, մի կողմից հուն. dak- արմատական տարբերակը ակնհայտ կերպով ծագում է հ.-ե. denk՝ արմատի ստորին աստիճանի dōk՝ ձևից՝ մյուս կողմից՝ հունարենում միաժամանակ վկայված է ծղկ-արմատական տարբերակ, որը հ.-ե. *denk'/donk'/dōk շարքի անդամ լինել չի կարող, այլ ենթադրում է հ.-ե. լիաձայն աստիճանի *ē կամ *ā ձայնավոր: Այս դեպքում էլ հատկանշական է, որ հունարեն ծղկ տարբերակին համաժամանակ ձևեր հունարենից դուրս ուրիշ ոչ մի տեղ չեն հանդիպում, ինչն էլ վկայում է ծղկ-ի՝ հունական նորակազմություն լինելու մասին: Կարծում ենք, հուն. ծղկ-ը առաջացել է այն բանի շնորհիվ, որ հ.-ե. ձայնդարձի երկու տարբեր շարքերի ստորին աստիճանի

⁹ Տե՛ս Յս. Pokorny, Գշվ. աշխ., էջ 355:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 892:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 201:

Աերկայացուցիչները հունարենում համընկել են. հ.-ե. *Յ > հուն. α և հ.-ե. *η > հուն. α: Ըստ այդմ, հուն. εδοκον -ի δακ-ը ըմբռնվել է որպես հ.-ե. *lād̥h արմատի ստորին աստիճանից ծագող հուն. λαθ և հ.-ե. *slāg* -ի ստորին աստիճանից ծագող հուն. λαβ տիպին պատկանող արմատ, և արհեստ ելաթոն, ապ. ληψομαι, պերֆ. ειληφα ու արհեստ ելաթոն, ապ. λησω պերֆ. λεληθα և այլն ձևերի փոխհարաբերությանը համապատասխան, հուն. εδοκον ձևից համաբանությամբ կազմվել են հուն. δηξομαι, δεδηχως, δεδηγμαι և այլն: Թու. Պոկոռնու բառարանում Աերկայացված չէ հուն. λαγχανω բայը:

Ֆ. դե Սույուրը վերոհիշյալ բայը բխեցնում է լեզչ արմատից: Ըստ այդմ, Սույուրի կարծիքով, պերֆեկտի հնագույն լեզոլոչա ձևին զուգահեռ. ειληχα-ն առաջացել է համաբանությամբ, որի համար հիմք է ծառայել λαγχανω:ελαχον և λαμβανω:ελαβον հարաբերակից ձևերի առկայությունը¹²:

Ինչպես տեսնում ենք, բերված օրինակները բոլորն էլ Աերկայացնում են միևնույն երևույթի մասնավոր դրսևորումները. եթե հ.-ե. ձայնդարձի երկու առանձին շարքեր ունեցել են համընկնող որևէ անդամ, հաճախ այդ շարքերի միջև տեղի են ունեցել համաբանական փոխանցումներ: Արդյունքում առաջացել են հ.-ե. ձայնդարձի տարբեր շարքեր համատեղող հերթագայությանն նոր շարքեր:

Միևնույն ժամանակ, ցեղակից լեզուների պատմական զարգացման ընթացքում հ.-ե. նախալեզվից ժառանգված ձայնդարձի տարբեր շարքերի միջև համաբանական փոխանցումների հետևանքով առաջացած հերթագայությանն նոր շարքերի առկայությունը և այն հանգամանքը, որ հաճախ հերթագայությանն նմանատիպ շարքեր են վերականգնվում նաև հ.-ե. շրջանի համար, կարծում ենք, թույլ է տալիս ենթադրել, որ դրանց գոնե մի մասը նույնպես առաջացել է նշված եղանակով.

հմտ. հ.-ե. (s)lēg / (s)lǝg / (s)lǝg¹³

հ.-ե. sē(i) / səi / sī / sei / si¹⁴ և այլն:

Բայց եթե առանձին լեզուներում առաջացած համաբանական նորակազմությունները հեշտությամբ ճանաչվում ու սահմանազատվում են հ.-ե. ձայնդարձի սկզբնական շարքի օրինաչափ աստիճաններից, հ.-ե. շրջանում անհամեմատ դրժվար է որոշել, թե հերթագայության այդ նոր շարքի անդամներից որոնք են եղել սկզբնական օրինաչափ ձևերը և որոնք են կազմվել համաբանությամբ: Բացի այդ հ.-ե. շրջանում ձայնդարձի համաբանական կազմությունների բացահայտումը դժվարանում է նաև այն պատճառով, որ այդ դեպքում մենք հավանաբար գործ ունենք ծագումնաբանորեն տարասեռ երևույթների հետ, որոնց վերջնական արդյունքները հետագայում կարող էին համընկնել: Այսպես, հ.-ե. g^a և g^{em} -գնալ, գալ- ձևերի, ինչպես և մի շարք այլ դեպքերում, հնարավոր է, որ հ.-ե. ձայնդարձի տարբեր շարքերի պատկանող արմատական ձևերը հենց սկզբից ևեթ եղել են միմյանցից անկախ, զուգահեռ տարբերակներ կամ, ասենք, տվյալ դեպքում *g^{em} -ը առաջացել է g^a նախնական արմատի հերթագայության զրո աստիճանի *g^a -ից * -em -ի հավելմամբ, ճիշտ նույն կերպ, ինչպես ասենք, հ.-ե. *ter արմատից * trem¹⁵ ձևը և այլն: Վերջապես, հնարավոր է, որ մի շարք դեպքերում էլ վերոհիշյալ տիպի հերթագայություններ Աերկայացնող տարբերակային նախաձևերը իրականում առաջացել են հ.-ե. սկզբնական արմատի զուգահեռ ընդարձակումների հետևանքով ճիշտ նույն կերպ, ինչպես, ասենք, հ.-ե. *pələ նախ-

¹² St' u Փ. де Сосюр, Труды по языкознанию, М., 1977, Мемуар..., էջ 438:

¹³ St' u Ju. Pokorny, նշվ. աշխ., էջ 959:

¹⁴ St' u նույն տեղը, էջ 891:

¹⁵ trem ձևի՝ ter - ից կազմված լինելու մասին St' u Ju. Pokorny, նշվ. աշխ., էջ 1070, 1092:

նական արմատից *plāk:plək, plek: plĕk, pleik¹⁶ տարբերակները: Նախնական արմատի չպահպանվելու դեպքում այդ կարգի զուգահեռ ընդարձակումները նույնպես հետագայում կարող էին շփոթվել համաբանությամբ առաջացած հերթագայության նոր շարքերի հետ: Մյուս կողմից, կարծում ենք, սկզբնական արմատի զուգահեռ ընդարձակումները ձայնդարձի շարք ըմբռնվելու դեպքում պետք է հերթագայության բանաձև ծառայելին համաբանությամբ մնանատիպ նոր դեպքերի կազմության համար: Այսպես, հնարավոր է, որ *ā, *ō ձայնավորներով նախնական արմատի զուգահեռ ընդարձակումներն են հիմք ծառայել միավանկ արմատների դեպքում համապատասխան *ā/ō հերթագայության առաջացման համար¹⁷:

Այսպիսով, թեև հ.-ե. շրջանում դժվար է համաբանությամբ առաջացած հերթագայության շարքերը հստակ կերպով սահմանազատել ծագումնաբանորեն այլ կարգի պատկանող երևույթներից, կարծում ենք՝ այդ հանգամանքը չի խանգարում ենթադրել, որ ինչպես առանձին լեզուների պատմական զարգացման ընթացքում, այնպես էլ հ.-ե. նախալեզվում ձայնդարձի տարբեր շարքերի միջև կարող էին տեղի ունենալ համաբանական փոխանցումներ, և որ հ.-ե. շրջանի համար վերականգնվող՝ ձայնդարձի տարբեր շարքեր համատեղող հերթագայությունների գոնե մի մասը, հավանաբար, առաջացել է հենց այդ եղանակով:

С. Р. АВЕТЯН - Роль аналогии в системе индоевропейского аблаута.-

Статья посвящена генетической интерпретации чередований, в которых совмещаются разные ряды и.-е. аблаута. В частности делается попытка показать, что часто такие “аномальные” чередования возникали в результате аналогических переходов между первоначальными аблаутными рядами.

¹⁶ St'au Ju. Pokorny, նշվ. աշխ., էջ 831, 805:

¹⁷ *ā/ō հերթագայության դեպքերի համար տե՛ս Փ. де Соссюр, նշվ. աշխ., էջ 426: